ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մեթոդ հասկացությունը լայնորեն գործածվում է բոլոր գիտություններում: Այդ հասկացությամբ սովորաբար նկատի են ունենում տվյալ գիտության օբյեկտի և առարկայի ճանաչողության եղանակները: «Մեթոդը օբյեկտի ուսումնասիրության կանոնների համակարգ է նրա գործնական օրինաչափությունների հիմքի վրա»[1]: Մեթոդը լայն առումով «իրականության պրակտիկ և տեսական յուրացման հնարների և գործողությունների ամբողջություն է»[2]: Քանի որ մարդկային պարզ հետաքրքրասիրությունը հաճախ հանգեցնում է մեծ մոլորությունների,«իրերի ճշմարտության որոնման համար անհրաժեշտ է մեթոդ»[3], ասում է Դեկարտը: Մեթոդը որևէ գործունեության եղանակ է, որը շրջանառության մեջ դնելուց առաջ մանրակրկիտ փորձարկվում և ստուգվում է: Մեթոդը նաև գործունեության սկզբունքների և հնարների ամբողջություն է: Ամենալայն իմաստով մեթոդը ինչ-որ նպատակի հասնելու, որոշակի խնդրի լուծման ուղի է, եղանակ[4]: Այն կարող է լինել գիտական և ոչ գիտական: Յուրաքանչյուր մարդ իր ամենօրյա գործունեության ընթացքում մշակում է որոշակի մեթոդներ, որոնց կիրառմամբ փորձում է ավելի արդյունավետ դարձնել իր գործունեությունը: Սակայն նման ճանապարհով մշակված մեթոդները գիտական չեն և կարող են հանգեցնել մոլորությունների: Դրան հակառակ՝ գիտական մեթոդը մշակվում է այս կամ այն գիտության կամ տեսության շրջանակներում, հետևաբար՝ տվյալ գիտության կամ տեսության մաս է: Որևէ մեթոդի կիրառումը թույլ է տալիս կանխատեսելի դարձնել գործունեության արդյունքները: Սոցիալական աշխատանքը մասնագիտական գործունեություն է, որի օգնությամբ բարելավվում է սոցիալական համակարգերի և ենթահամակարգերի գործառումը: Այդ համակարգերից ամենափոքրն անհատն է, ամենամեծը՝ համաշխարհային հասարակությունը: Սոցիալական աշխատողները միջամտում են միկրո-, մեզո-, մակրո- և մեգա- մակարդակներում: Այդ միջամտությունն իրականացվում է զանազան մեթոդներով: Ի տարբերություն այլ օգնող մասնագի-

[1] «Социология». М., 2004, с. 392.
[2] «Метод» // "Философский энциклопедический словарь". М., 1989, с. 358.
[3] **Декарт Р.** Сочинения в двух томах. Т. 1. М., 1989, с. 85.
[4] Տե՛ս «Материалистическая диалектика». Т. 2. М., 1982, էջ 166-67:

տությունների(բժշկություն, մանկավարժություն, իրավաբանություն, դայակություն և այլն)՝ սոցիալական աշխատանքը մարդկանց ծառայություններ մատուցելիս նկատի է ունենում «սոցիալական, տնտեսական, հոգեբանական գործոնների ողջ ամբողջությունը, որոնք ազդում են անհատի, ընտանիքի, սոցիալական խմբի և համայնքի կյանքի վրա»[5]:

Սոցիալական աշխատանքի տեսաբանները մեթոդը բնութագրում են որպես «ընթացակարգի որևէ համակարգված եղանակ»[6], «որևէ մեկի կողմից գործառույթի իրականացման… համակարգված գործընթաց»[7], «հիմնախնդիրների նկատմամբ յուրահատուկ մոտեցում»[8]:

Սոցիալական աշխատանքի պրակտիկա մուտք գործած առաջին կամ ավանդական մեթոդներն առանձնացվում էին ըստ այն բանի, թե սոցիալական աշխատողն անհատի հետ գործ ունի, թե խումբ է ձևավորում, կամ էլ՝ զբաղվում է համայնքի կազմակերպմամբ: Դրանք դիտվում էին որպես միմյանցից անկախ ընթացակարգեր, և յուրաքանչյուրն ուներ իր տեսական հիմքերը, որոնց վրա հենվում էր, և ենթադրում էր որոշակի հմտություններ: Այդ մեթոդներն այդպես էլ անվանվում էին՝ դեպքի հետ աշխատանք, խմբային աշխատանք և համայնքային կազմակերպում[9]:

Մասնագիտության հետագա զարգացման ընթացքում բազմաթիվ նոր մեթոդներ որդեգրվեցին ու ներդրվեցին, որոնք ընդհանուր առմամբ կարելի է դասակարգել երեք խմբի՝ դեպի շահառուն, դեպի հիմնախնդիրը և դեպի աշխատողը կենտրոնացած[10], սակայն նշված երեք մեթոդները մնացին որպես սոցիալական աշխատանքի դասական մեթոդներ: Երբեմն նկատի ունենալով ընտանիքի՝ որպես խմբի առանձնահատկությունը, որպես առանձին մեթոդ են առանձնացնում նաև ընտանեկան աշխատանքը:

Որոշ հեղինակներ սոցիալական աշխատանքի մեթոդ ասելով նկատի են ունենում շահառուի հետ սոցիալական աշխատողի կողմից իրականացվող որոշակի «հաջորդական գործողություններ» և որպես մեթոդներ առանձնացնում են «անհատական աշխատանքը կոնկրետ դեպքի հետ», «աշխատանքը խմբի հետ» և «աշխատանքը միկրոսոցիալական միջավայրում»[11]: Այս երեք մոտեցումները բխում են սոցիալական աշխատանքի հիմնական նպատակից, որն է՝ կանխել կամ չեզոքացնել ճգնաժամային իրավիճակների և սոցիալական անարդարութ-

---

[5] «Concepts and Methods of Social Work». Ed. By W. Friedlander, PRENTICE-HALL, INC., Engelewood Cliffs, 1976, p. 6.

[6] «Comission on Social Work Practice», NASW, Working Definition, p. 7.

[7] **W. Schwartz**, The Social Worker in the Group, in Beulah Roberts Compton and Burt Galaway, Social Work Processes, rev.ed.(Homoewood, III.:Dorsey, 1979), p. 17.

[8] Webster's Third New International Dictionary of the English Language, s. v. «method».

[9] Տե՛ս **M. McMahon**, The General method of Social Work Practice, Prentice Hall, 1990, p. 32.

[10] Տե՛ս նույն տեղը, էջ 330:

[11] **М. Фирсов, Е. Студенова**, Теория социальной работы. М., 2001, с. 402.

յան սոցիալապես և հոգեբանորեն վնասող ազդեցությունները և հաղթահարել անհատների, խմբերի և համայնքների առողջ զարգացման ճանապարհին ընկած արգելքները: Մասնագետների կարծիքով, անհատական աշխատանքի մեթոդի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն «իրականացվում է մեկը մեկի հետ իրավիճակում, երբ սոցիալական աշխատողը շահառուի հետ միասին լուծում է նրա անձնական և սոցիալական խնդիրները»[12]:

«Սոցիալական խմբային աշխատանքի շահառուներն են անհատները, ովքեր ունեն տարբեր խնդիրներ»[13]: Սոցիալական խմբային աշխատանքը սոցիալական աշխատանքի միջամտության մեթոդ է, որի ժամանակ մի փոքր խումբ մարդիկ, ովքեր ունեն ընդհանուր հետաքրքրություններ կամ խնդիրներ, կանոնավոր հավաքվում են և մասնակցում միջոցառումների, որոնք նախատեսված են իրենց ընդհանուր նպատակներին հասցնելու համար[14]: Ըստ Գ. Կոնոպկայի՝ «սոցիալական խմբային աշխատանքն...օգնում է անհատին ընդլայնել իր սոցիալական գործառումը և խմբի նպատակաուղղված փորձի միջոցով ավելի արդյունավետ լուծել անհատական, խմբային կամ միկրոսոցիումում ծագած խնդիրները»[15]: Սոցիալական խմբային աշխատանքի ժամանակ խումբը միջավայր է և համատեքստ անհատական խնդիրների լուծման համար: Սոցիալական խմբային աշխատանքի հիմնական նպատակներ են համարվում շահառուների միջև միջնորդավորված, շփումը, առկա խնդիրների ինքնագիտակցումը, սեփական խնդիրների իրատեսական գնահատումը, սոցիալական նորմերի և արժեքների ընդունումը[16]: Մասնագիտական շրջանակներում հստակություն չկա խմբային սոցիալական աշխատանքի՝ որպես մեթոդի վերաբերյալ: Իր գործունեության ընթացքում սոցիալական աշխատողը գործ է ունենում երկու տիպի խմբերի հետ՝ ա) որոնք ինքն է ձևավորում իր նպատակից ելնելով, բ) արդեն գոյություն ունեցող, որոնք ունեն խմբային որևէ սոցիալական հիմնախնդիր:

Առաջին տիպի խմբերը ներառում են միանման սոցիալական խնդիրներ ունեցող անհատներին, և սոցիալական աշխատողն ինքն է նրանց միավորում խմբի մեջ, որպեսզի դրա օգնությամբ լուծի անհատների խնդիրները: Այս դեպքում շահառուներն անհատներն են: Երկրորդ դեպքում սոցիալական աշխատողը գործ է ունենում արդեն ձևավորված խմբի հետ, երբ այն իր սոցիալական խնդրի պատճառով դառնում է շահառու: Օրինակ, սոցիալական աշխատողի շահառու կարող է դառնալ շեղվող վարք ունեցող անչափահասների խումբը կամ կոնֆ-

---

[12] **М. Фирсов, Е. Студенова,** նշվ. աշխ., էջ 402:
[13] Նույն տեղում, էջ 410:
[14] Տե՛ս **R. L. Barker**, The Social Work Dictionary, NASW Press, 1991, էջ 218:
[15] Տե՛ս **М. Фирсов, Е. Студенова,** նշվ. աշխ., էջ 410:
[16] Տե՛ս նույն տեղը, էջ 416:

լիկտային ընտանիքը: Երկու դեպքում էլ խնդիրը լուծելու համար նա ստիպված է աշխատել խմբի հետ: Սակայն այդպիսի աշխատանքի նպատակը դառնում է խմբի հիմնախնդրի լուծումը: Եթե մենք «խմբային սոցիալական աշխատանքի մեթոդ» ասելով նկատի ենք ունենում միանման սոցիալական խնդիր ունեցող և միմյանց անծանոթ անհատ շահառուների խնդիրը խմբային աշխատանքի միջոցով լուծելու ընթացակարգը, ապա երկրորդ դեպքում մեր շահառուն արդեն ձևավորված խումբն է, որն ունի խմբային խնդիր: Գործողությունները, որոնք իրականացնում է սոցիալական աշխատողն այդ երկու դեպքերում, էապես տարբերվում են միմյանցից: Հետևաբար, ճիշտ չի լինի դրանց ամբողջությունն անվանել խմբային սոցիալական աշխատանքի մեթոդ: Մեր կարծիքով, այն դեպքում, երբ սոցիալական աշխատողի շահառուն խումբն է, այն կարող է դիտվել որպես հավաքական անհատ, և խմբի հետ տարվող աշխատանքն էլ կարող ենք համարել անհատական աշխատանքի մեթոդի կիրառում:

Խմբային սոցիալական աշխատանքի մեթոդի կիրառումը ենթադրում է խմբի ձևավորում, նրա անդամների միջև հաղորդակցության հաստատում: Սոցիալական խմբային աշխատանքի բոլոր սահմանումներում այդ ընթացակարգերը նշվում են որպես առաջին քայլեր: Այս մեթոդի կիրառման դեպքում սոցիալական աշխատողը կարող է ստեղծել տարբեր խմբեր՝ կախված լուծվելիք խնդիրների բնույթից: Դրանով պայմանավորված՝ առանձնացնում են կրթական, վերականգնողական, սոցիալականացման, ինքնօգնության, թերապևտիկ և այլ խմբեր[17]:

Այսպիսով, նկատի ունենալով պրակտիկայում խմբի հետ աշխատելու սոցիալական աշխատողի փորձերը, կարող ենք դրանք դասել երկու տիպի՝ աշխատանք խմբում և աշխատանք խմբի հետ: Առաջին դեպքում շահառուն անհատն է, իսկ խումբն այն միջավայրը, որում լուծվում է նրա հիմնախնդիրը: Խնդրի լուծման այս եղանակի առավելությունն այն է, որ խմբի անդամները դառնում են սոցիալական աշխատողի աջակիցները խնդրի լուծման գործընթացում: Սոցիալական աշխատողն իրեն օգնելու համար նույնիսկ կարող է խմբում ներառել մարդկանց, ովքեր տվյալ պահին որևէ խնդիր չունեն կամ անցյալում հաջողությամբ մասնակցել են նման աշխատանքի: Շահառուներին օգնելու այս եղանակը թույլ է տալիս արագացնել տարբեր անհատ շահառուների խնդիրների լուծման գործընթացը: Այդ շահառուների համար իրենց խնդրի լուծման խմբային մեթոդը հանդես է գալիս որպես անհատական աշխատանքի այլընտրանք: Այս մեթոդի կիրառումը նպատակահարմար է այն դեպքերում, երբ կան միևնույն սոցիալական խնդիրներով շատ անհատ շահառուներ:

Մեթոդների նշված անվանումները երբեմն կապվում են շահառուի տիպի հետ, երբեմն՝ միջամտության առանձնահատկության հետ: Երկու

[17] Տե՛ս նույն տեղը, էջ 418-420:

մոտեցումներն էլ վիճահարույց են: Իհարկե, կարելի է համաձայնել, որ երբ սոցիալական աշխատողի շահառուներն են անհատը, խումբը, ընտանիքը և համայնքը, սոցիալական աշխատողը կարող է կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք կկոչվեն համապատասխան անվանումներով: Սակայն այս դեպքում պետք է հիշել, որ սոցիալական աշխատողը համապատասխանաբար պետք է լուծի անհատի, խմբի, ընտանիքի և համայնքի խնդիրները, որոնք դժվարացրել են նրանց կյանքը: Ընդ որում, անհատից բացի, մնացած դեպքերում խնդիրները կլինեն ընդհանուր համապատասխան հանրույթների համար: Բոլոր նշված դեպքերում նա կունենա սոցիալական դեպքեր, և նրա կողմից ծավալվող գործընթացը արդարացի կլինի կոչել «սոցիալական դեպքի վարում»: Վերջինս էլ ենթադրում է հետևյալ ործընթացների իրականացումը. կարիքների գնահատում, միջամտության պլանավորում, միջամտություն, միջամտության արդյունքների գնահատում, ավարտ, շարունակական վերահսկողություն: Այսինքն՝ սոցիալական աշխատողը բոլոր շահառուներին վերաբերվում է որպես անհատի՝ առաջին դեպքում այդ անհատն իսկապես ֆիզիկապես գոյություն ունի, մյուս դեպքերում կա հավաքական անհատ, որն ունի ընդհանուր խնդիր կամ խնդիրներ, որոնց լուծումն ըստ էության էականորեն չի տարբերվում այն դեպքից, երբ սոցիալական աշխատողը ծառայություններ է մատուցում ֆիզիկական անհատին:

Եթե վերևում նշված մեթոդների անվանումների հիմքում դնենք միջամտության եղանակը, ապա կստացվի, որ մենք ունենք անհատի խնդիրների լուծման չորս տարբեր եղանակներ.

1. դեմ առ դեմ աշխատանք անհատի հետ և նրա մեջ փոփոխություններ կատարելու միջոցով նրա խնդիրների լուծում,

2. աշխատանք անհատ շահառուի ընտանիքում՝ որպես նրա կենսագործունեության միջավայրում, որպեսզի լուծենք անհատի խնդիրները,

3. աշխատանք խմբում՝ որպես անհատի միջավայրում, որպեսզի լուծենք անհատի խնդիրները: Այստեղ հնարավորություն ենք ունենում զուգահեռաբար լուծելու այլ անհատների համանման խնդիրները նույնպես,

4. աշխատանք համայնքում՝ որպես անհատի միջավայրում, որպեսզի բարելավենք այն և լուծենք անհատի խնդիրները: Այս դեպքում զուգահեռաբար հնարավորություն ունենք լուծելու այլ անհատների և խմբերի/ընտանիքների համանման խնդիրները:

Պատահական չէ, որ ասում են, թե անհատ շահառուի ցանկացած դեպք վարող նաև ընտանեկան ու համայնքային սոցիալական աշխատող է: Սա ասելիս նկատի են ունենում, որ սոցիալական աշխատանքում ընդունված համակարգային և էկոլոգիական մոտեցումները ստի-

պում են դեպք վարողին շահառուներին իրենց խնդիրներով դիտարկել սոցիալական միջավայրի համատեքստում: Անհատի դեպքում այդպիսի պարտադիր միջավայրեր են ընտանիքը և համայնքը, խմբի դեպքում՝ համայնքը, հետևաբար՝ դեպք վարողը ստիպված է աշխատել նաև դրանց հետ որպես համակարգերի:

Մեր կարծիքով, սոցիալական աշխատանքի մեթոդների այսպիսի մեկնաբանությունն ավելի հիմնավորված է, քանի որ չափանիշը սոցիալական խնդիրների լուծման եղանակն է: Իրականությունը թելադրում, պայմանավորում է իր ուսումնասիրության և փոփոխության եղանակները: Յուրաքանչյուր եղանակ կամ մեթոդ ունի իր առավելությունները և թերությունները: Ընտրության ընթացքում մենք հաշվի ենք առնում դրանք, ունենք ընտրության որոշակի ազատություն, բայց կան նաև այդ ազատությունը սահմանափակող գործոններ:

Խումբը կամ ընտանիքը շահառու դառնալու դեպքում կարող ենք աշխատել նաև համայնքի հետ և այդպես լուծել նրանց խնդիրները: Օրինակ, որևէ մշակութային խմբի կյանքը կարող է դժվարանալ տարբեր պատճառներով: Կարող ենք փորձել խնդիրը լուծել՝ բարելավելով համայնքը որպես տվյալ խմբի գործառման միջավայր:

Երբ խումբն է հանդես գալիս իր խնդիրներով որպես շահառու, և երբ խումբ ենք ստեղծում և աշխատում նրա հետ, որպեսզի օգնենք այնտեղ ներառված անհատներին, կիրառում ենք սոցիալական տարբեր տեխնոլոգիաներ: Երկրորդ տեխնոլոգիան լիիրավ կարող ենք կոչել խմբային սոցիալական աշխատանքի մեթոդ, իսկ առաջինը՝ պարզապես աշխատանք խմբի հետ, որն ավելի շուտ նման կլինի անհատական աշխատանքին (քանի որ ունենք մարդկանց խումբ, որն ունի ընդհանուր խնդիր, ոչ թե խմբի բոլոր անդամներն ունեն միևնույն խնդիրը, այլ որպես հավաքականություն նրանք ունեն ընդհանուր խնդիր, որը դժվարացնում է նրանց՝ որպես խմբի գործառումը):

Խմբի, ընտանիքի և համայնքի շահառու լինելու դեպքում կարող ենք կիրառել անհատական սոցիալական աշխատանքի մեթոդը և փորձել այդ ճանապարհով լուծել նշված հանրույթների խնդիրները: Ուղղակի պետք է հաշվի առնել, որ այդ դեպքերում միջամտության արդյունավետությունը նույնը չի լինի:

Այսպիսով, անհատ շահառուի հետ աշխատելիս սոցիալական դեպք վարողն ունի այլընտրանքներ՝ անհատական, խմբային, այդ թվում և՝ ընտանեկան, ինչպես նաև՝ համայնքային աշխատանքի մեթոդները: Դրանք կարող են ծառայել ինչպես որպես հիմնական, այնպես էլ որպես միջամտության լրացուցիչ մեթոդներ:

Նշված մեթոդների անվանումների հետ կապված խառնաշփոթը հաղթահարելու համար երբեմն մասնագետներն օգտագործում են ընտանեհենք և համայնքահենք սոցիալական աշխատանք հասկացութ-

յունները՝ նկատի ունենալով՝ համապատասխանաբար ընտանիքի և համայնքի ներուժի օգտագործումն անհատ շահառուի խնդիրների լուծման ընթացքում: Սակայն դա օրակարգից չի հանում հետևյալ մեթոդաբանական հարցը՝ խմբային, ընտանեկան և համայնքային սոցիալական աշխատանքի մեթոդ հասկացությունները նկատի ունեն աշխատանքը՝ համապատասխանաբար խմբի, ընտանիքի և համայնքի՝ որպես շահառուի՞ հետ, թե՞ աշխատանքն ընտանիքում, խմբում և համայնքում՝ որպես դրանց գործառման միջավայրի: Մեր կարծիքով, խնդիրը կարելի է լուծել երկու ճանապարհով: Առաջին, երբ ասում ենք, անհատական, խմբային, ընտանեկան և համայնքային աշխատանքի մեթոդներ, նկատի ենք ունենում անհատ շահառուի կյանքին սոցիալական աշխատողի միջամտության եղանակը, իսկ երբ շահառուն խումբը, ընտանիքը կամ համայնքն են, միջամտությունն իրականացվում է անհատական աշխատանքի տեխնոլոգիայով, և այդ դեպքում նույնպես գործ ունենք անհատական աշխատանքի մեթոդի հետ: Իրավիճակի հանգուցալուծման մյուս ուղին ընդունելն է, որ սոցիալական աշխատանքի դասական մեթոդները՝ խմբային, ընտանեկան և համայնքային, իրենց հերթին լինում են երկու տիպի՝

1. աշխատանք խմբում / ընտանիքում և համայնքում,
2. աշխատանք խմբի / ընտանիքի և համայնքի հետ:

Առաջին տիպի ռազմավարության կիրառման դեպքում՝ ա) շահառուն և միջամտության օբյեկտը կլինի անհատը, իսկ խումբը / ընտանիքը և համայնքը՝ նրա խնդիրների լուծման համատեքստ, բ) խումբը / ընտանիքը կլինի շահառու և միջամտության օբյեկտ, իսկ համայնքը՝ նրա խնդիրների լուծման համատեքստ:

Առաջին տիպի ռազմավարության կիրառման դեպքում սոցիալական դեպքը վարողը կարող է կիրառել խումբը/ընտանիքը և համայնքը որպես միջավայրեր բարելավող զանազան ընթացակարգեր և տեխնոլոգիաներ, օրինակ՝ խմբային և ընտանեկան աշխատանքի տեսակները, համայնքային աշխատանքի տեսակները և այլն:

Երկրորդ տիպի ռազմավարության կիրառման դեպքում սոցիալական աշխատողի շահառուն և միջամտության օբյեկտը համապատասխանաբար կլինեն խումբը/ընտանիքը և համայնքը, իսկ միջամտության մարտավարությունները կներառեն բոլոր այն ընթացակարգերն ու տեխնոլոգիաները, որոնք թույլ կտան լուծել նշված շահառուների սոցիալական հիմնախնդիրները:

Բանալի բառեր – *սոցիալական աշխատանքի մեթոդ, անհատական աշխատանքի մեթոդ, խմբային աշխատանքի մեթոդ, համայնքային աշխատանքի մեթոդ*

АРТАК ХАЧАТРЯН – ***О методах социальной работы***. – В статье рассматриваются вопросы, обусловленные методами социальной работы, в частно-

сти, делается попытка по-новому их классифицировать, выделив индивидуальную, групповую и общинную социальную работу. Выражается мнение, что в Армении смутно представляют себе эти методы. Например, часто употребляются такие понятия, как метод групповой социальной работы и метод общинной социальной работы, но при этом не проводится разграничение между группой в качестве клиента и в качестве среды деятельности индивида. Точно так же не различается, когда клиентом социального работника выступает община и когда она является средой обитания индивида или группы.

Ключевые слова: *метод социальной работы, метод индивидуальной работы, метод общинной работы*

ARTAK KHACHATRYAN – ***Reasoning about the Methods of Social Work.*** – The article discusses the problems related to the definitions of Social Work Methods, particularly, the author is attempting to clarify the definitions of classical methods of Social Work - individual social work, social group work and community social work. The author expresses the opinion that in the process of implementation of Social Work profession in Armenia, no clear impression about these methods was formed. Especially in teaching rooms, in publications often the terms social group work method and community social work method are being used without a clear differentiation between cases, when the social worker is working with the group as a client and when he/she is working in the group, as an environment of functioning of individual. Adequately there is no clear understanding of cases, when the community is the client of the social worker and when it is an environment of functioning of the individual or group.

The author suggests classifying the traditional methods of Social Work in two ways:

1. group/family and community methods of Social Work, considering that the social worker is working adequately in the group/family, and community and when the client is an individual, the group/family, and community – as an environment.

2. Individual, group/family, and community methods of Social Work, when the client is adequately the individual, the group/family and the community.

Keywords: *social work method, case work method, group work method, community work method*